67. ԿԱՋ ՉԼՏՈՂ ԽԱԼԻՎՈՐ

Ժամանակով թակավոր թաբդիլ կլըղի կմտնի, կառնի լծլեն խետ ութ. կէրթաւ պտտվել:

Կէրթծ կտիսնա, որ ըխթիյար մարթըմ, փետրվար ամսու մեչ, պաղ կոտրե, մեչ գյետին կտավ կլվա:

Կասի. - Ըխթիյար, տասվերկու ամսվան մեչ իրեքյ ամիս ընչի՞ չավելցուցիր:

Կասի. - Եոտսունվերկոա արքիլեց, չթողեց:

Կասի. - Ինչի՞ աջալւս չարիր:

Կասի. - Աջալա արի, խը՛ղ տարավ:

Կասի. - Կազմ էրողկեմ, կանա՞ս չլտե:

- Քյո կիտցած ուսթեն եմ, - կասի:

Թողնի կէրթծ թակավոր:

Լծլին կասի. - Ես ծերուն ի՞նչ խարցուցի. էն ի՞նչ պատասխան տվեց զիկ:

Կասի. - Չե՛մ կիտե:

- Ինոր պատասխան քյիզնից կուզեմ, - կասի, - որ չպիրես, քյո վիզ կզծնեմ:

Լծլեն պարտավորված կէրթծ: Վուրուն կխարցուցի, պատասխան չկանա առնե: Ճարաճատ կէրթծ մոտ ըխթիյար:

Կասի. - Ըխթիյար ախպե՛ր, էրեկ մարթմ էկավ քյե ասաց՝ տասվերկու ամսվան մեչ ընչի՞ իրեքյ չծվըլցուցիր. տյու ասիցիր՝ եոտսունվերկու չթողեց, էտ ի՞նչ ասել ի:

Կասի. - Ապա տաս քյիսա տու զիկ. ասե՛մ:

Պարտավորված կխանի տաս քյիսա կուտծ:

Ըխթիյա·ր կասի. - Ընչի՞ տասվերկու ամսվան մեչ իրեքյ ·ամսվան եգյա՛ն չծվլցուցեր. էս իրեքյ ցուրտ ամսվան խանգյիստ աներ: Ես ասիցի եոտսունվերկու ատմից չծվլցուցի:

- Էն ի՞նչ էր. - կասի. - որ ասաց՝ ինչի՞ աջալա չարիցիր, տյու ասիր՝ ածջալծ արիցի խըլղ տարավ:

Կասի. - Տաս քյիսա սու, որ ասեմ:

Պարտավորված կխանի տաս քյիսա կուտա:

Կասի. - Ասաց՝ ինչի՞ շոտ չփսայվար, քյե տղա էլներ. աշխատին, տյու խանգյըստաներ: Ես ասի՝ շոտ փսայվա, ամա ախչիկ էլծվ, խըղ տարան:

Կասի. - Ապա էն ի՞նչ ի, որ ասաց կուզեմ էրողկեմ, կանա՞ս չըլտես, տյու ասիր՝ բիրինջի ուսթեն եմ:

Կասի. - Իտա զոռն ի, քսան քյիսա տու, որ ասեմ:

Խանի քսան քյիսա էլ կուտա:

Կասի. - Կազն էլ տյու ես, քե չլտիցի. նոր կէրթաս: Դե կնծ խե գյործիտ: